ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՐԱՐ ԱԶԱՏ ԱՍԱՏՈՒՐՈՎԻՆ

Ապրիլի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հարավային Ռուսաստանի թեմական պատվիրակությանը՝ թեմական առաջնորդ Տ. Մովսես եպս. Մովսիսյանի առաջնորդությամբ, որի ընթացքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց եկեղեցանվեր բարերար Ազատ Ասատուրովին:

Հարավային Ռուսաստանի թեմական առաջնորդի և թեմական խորհրդի խընդրանքին ընդառաջ, Հայրապետական կոնդակով Հայ Եկեղեցու բարձրագույն պարգևը շնորհվել է պրն Ասատուրովին՝ թեմական կյանքում ունեցած մեծ վաստակի համար:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը ընթերցեց Հայրապետական կոնդակը (տե՛ս № Բ-Գ, էջ 14)

Պրն Ազատ Ասատուրովին հանձնելով բարձր պարգևը, Նորին Սրբությունը մեկ անգամ ևս բարձր գնահատեց ազգին, Հայրենիքին ու Եկեղեցուն բարերարի մատուցած ծառայությունները:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ուկրաինայի Հանրապետության նորանշանակ դեսպան Վլադիմիր Տյագլոյին:

Նորին Սրբությունը ողջունեց դեսպանի այցը հայոց հոգևոր կենտրոն և ուրախություն հայտնեց, որ հայ-ուկրաինական դարավոր կապերը շարունակում են զարգանալ՝ որպես երկու անկախ պետությունների եղբայրական համագործակցության արգասիք:

Հանդիպման ընթացքում նորանշանակ դեսպանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, բարձր գնահատեց Ուկրաինայի հայ համայնքի դերը երկրի մշակութային և հասարակական կյանքում:

Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքը հայտնեց պրն Տյագլոյին այն վստահությամբ, որ նոր դեսպանը ևս իր նպաստը կբերի երկու երկրների և ժողովուրդների հարաբերությունների առավել ամրապնդմանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մուհամադ Ֆարհադ Քոլեյնիին:

Կարևորելով Եկեղեցու դերը ժողովուրդների միջև բարեկամության և եղբայրության հաստատման գործում, դեսպանը, օգտվելով առիթից, իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ ԻԻՀ հեղափոխության 23-րդ տարեդարձին նվիրված մշակութային միջոցառմանը մասնակցություն բերելու համար:

Հանդիպման ընթացքում մտահոգություն հայտնվեց Իսրայելա-Պաղեստինյան հակամարտության առնչությամբ, որի զոհն են դառնում հարյուրավոր անմեղ մարդիկ: Զրուցակիցները հույս հայտնեցին, որ հակամարտությունը կլուծվի երկխոսության և բարի կամեցողության խաղաղ ճանապարհով:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի արտաքին գործերի նախարար, ԵԽ նախարարների խորհրդի նախագահող Անթանաս Վալիոնիսի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում Վեհափառը ներկայացրեց Հայոց Եկեղեցու գործունեությունը, առկա դժվարությունները, դրանց հաղթահարման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

Իր հերթին Լիտվայի ԱԳ նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց իր երկրի կրոնական կյանքը:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Հայրապետը շնորհակալություն հայտնեց Լիտվայի ԱԳ նախարարին՝ տեղի հայ համայնքի հանդեպ ցուցաբերած ուշադրության համար, և մաղթեց, որ առավել սերտանան հարաբերությունները մեր երկու երկրների միջև:

Հանդիպմանը ներկա էր նաև Լիտվայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության կապի նախարար Լեոնիդ Ռեյմանի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, գոհություն հայտնեց հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության համար, ուրախությամբ փաստելով նաև երկու Եկեղեցիների եղբայրական ջերմ հարաբերությունների մասին, անդրադարձավ Հայ և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների այսօրվա համագործակցությանը, մասնավորապես կրթական ոլորտում: Ինչպես նշեց Հայոց Հայրապետը, արդեն այս տարվանից ճեմարանավարտ ուսանողները կկարողանան իրենց կրթությունը շարունակել Ռուս Ուղղափառ Եկեղեցու աստվածաբանական հաստատություններում:

ՌԴ կապի նախարարը, Վեհափառ Հայրապետին տեղեկացնելով Հայաստան այցի նպատակը, շնորհակալություն հայտնեց ընդունելության համար՝ նշելով, որ Ամենայն Հայոց Հայրապետի հետ հանդիպումը մեծ պատիվ է իր համար:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԾ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Ապրիլի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ֆրանսիական «Ֆրանսիա-Հայաստան բողոքականների համերաշխություն» կազմակերպության նախաձեռնությամբ Հայաստան ժամանած Ավետարանական և Կաթոլիկ Եկեղեցիների շուրջ 120 հոգուց բաղկացած էկումենիկ պատվիրակությանը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Մարսելի հոգևոր հովիվ Տ. Ջատիկ վրդ. Ավետիքյանի առաջնորդությամբ:

Նորին Սրբությունը ողջունելով հյուրերին, կարևոր նկատեց միջեկեղեցական կապերի անհրաժեշտությունն ու քրիստոնեական եղբայրությունը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ 1700-ամյա Հայ Եկեղեցու ներկա վիճակին ու առաքելությանը, ներկայացրեց խորհրդային անաստվածության տարիներից հետո Եկեղեցու գործունեության հիմնական ուղղությունները:

Հանդիպման ավարտին կազմակերպության նախագահ Վերապատվելի Սամուել Սահակյանը Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար: Հյուրերը հնարավորություն ունեցան նաև լսելու իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ Նորին Սրբության ունեցած տեսակետները:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Ապրիլի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի Հանրապետության զինված ուժերի հոգևոր ծառայության ղեկավար, գնդապետ Գեորգիոս քահանա Ապատրոլակիդեսին և նրա օգնական, գնդապետ Գրիգորիոս քահանա Լազարինեսին՝ ՀՀ ԶՈՒ հոգևոր տեսուչ Տ. Արշեն աբեղա Սանոսյանի ուղեկցությամբ:

Զրույցի ընթացքում կարևոր նկատվեց հոգևոր ծառայության դերը զինծառայողներին քրիստոնեական-բարոյական սկզբունքներով և ազգային-հայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:

Հունական բանակը հոգևոր ծառայության առավել երկար տարիների փորձ ունի: Վեհափառ Հայրապետին տեղեկություններ հաղորդելով իրենց ծառայության վերաբերյալ, հայր Գեորգիոսը նշեց, որ այսօր Հունաստանի զինված ուժերում իբրև բանակի սպաներ իրենց ամենօրյա հոգևոր սպասավորությունն են բերում բազմաթիվ հոգևորականներ:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հայկական և հունական զինված ուժերի հոգևոր ծառայությունների միջև գոյություն ունեցող համագործակցության առիթով և նշեց, որ այսօրվա հայկական բանակում հոգևոր ծառայությունը հիմնվել է միայն վերջին տարիների ընթացքում, ուստի և խիստ օգտակար է հունական փորձառությանը հաղորդ դառնալը:

Շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետի ընդունելությանն արժանանալու համար, հյուրերը պատրաստակամություն հայտնեցին իրենց աջակցությունը բերել հայ հոգևորականներին զինված ուժերում հոգևոր ծառայության ասպարեզում:

Հանդիպման ավարտին Հայոց Հայրապետն իր ողջույնը հղեց Հունաստանի Ուղղափառ Եկեղեցու Արքեպիսկոպոսին և հաջողություն մաղթեց հույն հոգևորականներին իրենց առաքելության մեջ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Ապրիլի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Բելառուսի ՆԳ նախարար, գեներալ-մայոր Վլադիմիր Նաումովի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ՆԳ նախարար Հայկ Հարությունյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում ՀՀ ՆԳ նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց երկու նախարարությունների միջև փոխգործակցությունը և իր գոհունակությունը հայտնեց վերջինիս արդյունավետության առնչությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց և բարձր գնահատեց երկու երկրների իրավապահ մարմինների համագործակցությունը՝ իբրև նախկին խորհրդային հանրապետությունների միջև շարունակվող բարեկամության դրսևորում: Վեհափառ Հայրապետը միաժամանակ կարևոր նկատեց Ներքին գործերի նախարարության աշխատանքը երկրի կայունության և օրինականության պահպանման գործում:

Ի պատասխան հյուրերի հարցումների՝ Հայոց Հայրապետն անդրադարձավ նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմությանն ու ներկայիս գործունեությանը:

Հանդիպմանը ներկա էր Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նորանշանակ դեսպան Զո Սյուելյանին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց պրն Սյուելյանի նշանակումը և վստահություն հայտնեց, որ նոր դեսպանը արդյունավետորեն կշարունակի նպաստել դարավոր արմատներ ունեցող հայ-չինական կապերի զարգացմանը:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմությանն ու Հայ Եկեղեցու ներկայիս կյանքին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, չին դեսպանը հավաստիացրեց, որ կաշխատի առավելագույնն անել երկու երկրների հարաբերությունների սերտացման համար:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապրիլի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրաժեշտ տալու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Բալ Անանդը, որն ավարտում է դիվանագիտական իր առաքելությունը Հայաստանում:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց պրն Անանդի ունեցած նպաստը երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման և մեր երկու երկրների այսօրվա համագործակցության ձևավորման գործում: Հայոց Հայրապետը մասնավորապես իր երախտագիտությունը հայտնեց Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը վերստին կյանքի կոչելու գործում դեսպանի ունեցած աջակցության համար: Երկու ժողովուրդների հոգևոր կապերի մերձեցման գործում կարևոր ներդրում նկատվեց նաև դեսպանատան կողմից «Ազդարար Հնդկաստանի» պարբերականի հրատարակումը՝ նվիրված Հայաստանի և Հնդկաստանի պատմությանն ու ներկային:

Հրաժեշտ տալով դեսպանին՝ Վեհափառ Հայրապետը մաղթեց նրան հաջողություն իր հետագա առաքելության մեջ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 28-ին Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության կրթության նախարար Վլադիմիր Ֆիլիպովին՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի և Ռուս-հայկական Սլավոնական պետական համալսարանի ռեկտոր Արմեն Դարբինյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց երիտասարդության դաստիարակության գործում Եկեղեցու կարևոր դերի, ինչպես նաև կրթական հաստատություններում կրոնի ուսուցման անհրաժեշտության մասին՝ իբրև հոգևոր-բարոյական արժեքների և ազգային ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

Վեհափառ Հայրապետին մանրամասն ներկայացնելով ՌԴ կրթության նախարարության գործունեությունը՝ պրն Ֆիլիպովը նշեց հատկապես նախարարության սերտ համագործակցությունը Մոսկվայի Պատրիարքարանի հետ և Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ իբրև ավանդական արժեքների կրողի կարևոր դերը կրթական ոլորտում:

«Ցուրաքանչյուր ժողովրդի և պետության համար առաջնային են ազգային արժեքները, դրանց պահպանությունն ու նրանց նկատմամբ անհրաժեշտ հոգածության դրսևորումը»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ ողջունելի նկատելով կրթական ասպարեզում համագործակցությունը պետության և Եկեղեցու միջև:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Ս. Էջմիածնի պատմությանը, Հայ և Ռուս Եկեղեցիների փոխհարաբերություններին: